

բօնասուցցի զեկափարութեան ներքոյ մանուկներին ժողովէին և խումբ խումբ բաժանելով նոցա երգել տալին, աւետարանից կարգային կրօնական գիտելիքներ հաղորդէին, որոնցից տնայէս զօրկ են մեզանում գէթաղգարար ոչ միայն փոքրերը այլ նաև հասակաւորները:

Կ. Մ.



ՊԵՏԻ Է ԸՆԴԵՕՔ ԸՆԶԼՍԵԼ ԲԸՐՈՅԸ ԿԸՆՈՒՄ
ԹԻՒՆԸ ԿՐՕՆԻՑ:

Լատինական գրականութեան մէջ այս տարի մի ուժեղ հոսանք է նկատուում գէպի կրօնական խնդիրը: Արքային ժամանակներս Լատինական ազգերից ոմանք կրօնը արհամարհանքի մատնեցին և սկսան զիտութեան գերակշռութիւնը դաւանել, բայց այժմ արդէն իսկ նկատելի են այդ ուղղութեան կորստաբեր հետեւանքներն ուստի ժամանակիս նշանաւոր փիլիսոփաներն ու գրագէտները սկսել են հետզհետէ բողոքել այդ ընթացքի դէմ: Հակակրօնական ուղղութիւնն այնքան առաջ գնաց, որ դպրոցներից վերացրեց կրօնի ուսուցումն փոխարէնը զնեղով բարոյագիտութեան դասերը: Սակայն այժմեան փիլիսոփայութիւնը մի հանրական և ամէնին ընդունելի բարոյագիտութեան սիստեմ՝ չունի, զիւրիս էր գուշակել, որ այդպիսի առարկայի աւանդումն դպրոցներում պիտի անմատութեան (absurde) հասցնէր: Եւ հա այդ խնդրին են նուիրուած հետեւող տղերքը գերմանական մի մանկավարժական թերթի, որ թարգմանաբար յառաջ ենք բերում:

1882 թ. Ֆրանսիական ժողովրդական դպրոցներում դադարեցրին կրօնի դասերը և նորա տեղ իրրեւ դպրոցական պարտաւորեցուցիչ առարկայ, այսպէս ստա՞ծ: Բարոյականութեան դասեր նշանակեցին: Ֆրանսիացի ժողովրդի առաջնորդող շրջանները կարծում էին, թէ այդպիսով գործը զրոյս կտանեն և ազազայ սերնդի բարոյականութիւնը կրարձրացնեն: Ուսուցչական սեմինարներում մեծ եռանդով սկսեցին բարոյականութիւն սովորել և այս նոր առարկայի համար էլ պակաս չէր սիրոյ առաջին կրակը: Բայց բարոյականութեան ուսուցիչները շուտով մեծ տարակուսանքի մէջ ընկան թէ ի՞նչ

է նշանակում բարոյականութիւն, ինչ առարկաներ են պատկանում սորան, ի՞նչ պէտք է անել գոհացիւթեան (Trivialität) մէջ չընկնելու և ի՞նչ «կրօնական» չը լինելու համար: Եւսպէսնութիւն և ուսուցման առարկային վերաբերեալ խնդիրների մթութիւնը առաջին մեծ փնտան էր, որից նեղուում էր Ֆրանսիական դպրոցի այս նորածին մանուկը:

Եւսուսման այն շատերը փառաւոր հետեւանքներ էին սպասում: 1889 թ. համաշխարհային ցուցահանդիսի մէջ ամբողջ աշխարհին Ֆրանսիան պիտի երևար իւր բոլոր մեծութեամբ, պակաս տեղ չպէտք է բռնէր այդ փառքի մէջ և Ֆրանսիական դպրոցը: Պատափարութիւնը պատուիրել էր, որ ժողովրդական դպրոցների բոլոր վերատեսուչներն և տեսուչները տեղեկութիւններ ուղարկեն և յատկապէս բարոյականութեան ուսուցման վիճակի և հետեւանքների մասին: Եւ թէ տարուայ փորձառութիւնից յետոյ կարելի էր տեսնել այս նոր ծառի պտուղները: 558 հատ լաւ մշակուած, մանրամասն հաշուեթղթեր էին ուղարկուած: Փարիզի համալսարանի բողոքական աստուածաբանութեան բաժնի ղեկան Լիխտենբերգը այս նիւթերը դասաւորել, մշակել և հրատարակել է մի հաստափոր հատորի մէջ: Մեք ոչ մի կասկած չունինք այս հրատարակութեան առարկայականութեան (Objectivität) և անաչառութեան մասին. նա հիմնուած է իսկական աղբիւրների վերայ: Բացի դորանից Լիխտենբերգը ժողովրդական դպրոցներն աշխարհականացնելու սկզբունքի պաշտպան է, ուստի և նորա կարծիքն աւելի մեզ հակառակ կողմը պիտի հակուէր:

Երբ ի՞նչ հետեւանքի հասան Ֆրանսիացիք իրենց բարոյականութեան ուսուցմամբ: Տեսուչներից մի քանիսը տեղեկագրում են, տղաները կենդանիներին այլ ևս չեն չարաբարում հասակով սաները այլ ևս չեն ծնծում կրտսերներին: Համայնքի և պետութեան սեպհականութեան դէմ եղած օրինազանցութիւնները հազուադէպ են դարձել, հասարակաց պարտեզները այլ ևս չեն փնտաւում: Մանուկներն այժմ աւելի պակաս են ստում: Սքանչելի է ուրեմն: Եւելի բան ցանկալ չէր կարելի: Եւ եթէ Ֆրանսիական դպրոցները մեծ մասով այդ դրութեան են հասել, այն էլ այդպիսի մի հասարակ միջոցով—բարոյականութեան դասերով: ուրեմն մեր (գերմանական) դպրոցները շատ յետ են, քանի որ իրաւաբանական վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ մեր ժողովրդի թերութիւններն աճում են և այդ բանի մէջ մեղադրուում է նաև զըպ-

1. տես Schulblatt für die Provinz Brandenburg. 1895. յուլ. օգ.

բոցը: Աւերմն այս խնդրի մէջ էլ ինչպէս առաջ ուրիշ շատ բաների մէջ այնպէս սիրով արել ենք: Կէտք է խելոյն և եթ հեռակենք քաղաքակրթութեան ասպարիզում մեր յառաջագէտ հարեաններին:

Բայց իրողութիւնն այդպէս գրաւիչ չէ: Այդ նպատակով տեղեկութիւնները բացառութիւններ են միայն որովհետեւ այն հրատարակութեան մէջ ասուած է, որ ուսուցիչներից շատերը համոզմունքի անհրաժեշտ ոյժ և նախապատրաստութեան ունակութիւն չունին այս առարկայի ուսուցման համար: Այս հիմունքներով էլ հէնց դասաւորուած է նիւթը: Լիմիտում 100 դպրոցից 60-ը բարոյականութեան ուսուցում չունին. իսկ Լնդուէմում: Օրէնտում աւելի ևս փառ է:

Աւերչները բարոյականութեան փոխարէն քաղաքականութեամբ են պարապել: Այդ տեսուչներից մէկը հարցրել է մի ուսուցչի թէ անցեալ ամսուայ ընթացքում բարոյականութեան ի՞նչ խնդիրներով է զբաղուել աշակերտների հետ: ուսուցիչը պատասխանել է. «մենք խօսել ենք նախաարարութիւնների մասին»: Իբերի գրութիւնը ֆրանսիացում յիշեցնում է Տիրոջ խօսքը. «Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զի՛նչ լինիցի»: Մի այլ տեղից գրում են. «Ուսուցիչներից մի քանիսը կարծում են, թէ բարոյականութեան դասեր են տալիս եթէ համարքի վերաբերեալ խնդիրներ են բացատրում: Իսկական բարոյականութեան ուսուցումը վերջացրած է, քաղաքականութեամբ են զբաղուում: Իւրաքանչիւր ուսուցիչ իւր քաղաքական հոյեցականների համեմատ բացատրում է հայրենասիրի և քաղաքացու պարտքը: Դրանիմանից գրում են. «Կարողի ապագան փառնորդուած է երևում ուսուցիչների փառ յատկութիւնների պատճառով»: Մի տեղ ասած է միևեւ իսկ. «Պէտք է ուսուցիչներին հեռացնել այն փառ օրի նակիցոր բորձը պաշտօնէութիւնն է տալիս»: Օքսերից գրում են. «Ուսուցիչը պաշտօնեայ է, նա տեսնում է, որ խնամրիկներով աւելի բան կարելի է ձեռք բերել, քան ծառայութեամբ: ճրտեղից պէտք է բղիւի պարտականութեան համոզումը: Բացի սորանից շեշտուած է, որ բարոյականութեան քարոզները օգուտ չեն տալ: Եթէ հասարակութեան այն չըջանը, ուր ապրում են երկխաները աւելի չըբաւանայ: Ի՛նչ կարող է անել բարոյական վարդապետութիւնը, եթէ ծնօղների և ուսուցիչների գործողութիւնները հակասում են վարդապետութեան: Օնօղները միայն շահերի բարոյականութիւնը լաւ գիտեն: Արեւանները ծնող-

ների համար լրագիրներից մեծ սկանդալներ են կարգում:—Մի խօսքով բարոյականութեան ուսուցումից սպասած յոյսերը բոլորովին ջուր դարձան և եթէ մեր հարեանները ուրիշ ձեռնարկութիւնների մէջ ևս նոյնպիսի հեռակենքների են հասել լաւ կը լինէր, որ 1889 թ.-ի ամբողջ ցուցահանդէսը զուլա եկած չլինէր:

Դա ֆրանսիայի անառողջ քաղաքական հանգամանքների հեռակենքն է. հրաշք չէ, որ բարոյականութեան ուսուցումը այնպիսի ձախորդ սխալների մէջ է ընկել: Ճշմարիտ է, մեր երկրի քաղաքական հանգամանքները աւելի բարեկազմ են, քան ֆրանսիական հասարակութեան մէջ, բայց ո՞վ կարող է երաշխաւորել թէ մեր մէջ ևս եթէ բարոյականութեան ուսուցումը կրօնական շրջանից դուրս հանուի՝ իւրաքանչիւր «իւր» բարոյականութեամբ չի զբաղուիլ և քաղաքականութեան մէջ բռնած անհատական ուղղութիւնից ազդուիլ: Բայց զուգէ այս ձախորդութեան յանցանքը սխալ մեթոդի մէջն է և ոչ նոյն իսկ սկզբունքի: Ընշուշտ ֆրանսիայում փորձեր կը լինեն աւելի լաւ դասատուութեան եղանակներ գտնելու, բայց դա էլ չի օգնիլ:—Այսպէս ֆրանսիական հոգաւար աստուածաբան Ad. v. Pressense-ն, որ աշխատում էր դպրոցն ապաւել կաթոլիկ կղերականութեան ազդեցութիւնից, իւր Revue chrétienne թերթում խոստովանում է անկեղծութեամբ, որ բարոյականութեան այժմեան ուսուցումը միանգամայն անբուարար և սխալ է:

Բարոյականութեան ուսուցումը կրօնի հետ մի անխորի միութիւն պիտի կազմէ, այլ կերպ անկարելի է, որովհետեւ բարոյականութիւնը բաժանուած կրօնի հետ ունեցած իւր բնական յարաբերութիւնից՝ միանգամայն անպէտք է մատաղ սերնդի կրթութեան համար, դա մանկավարժական մի անմրտութիւն է, որից մեծը մտածել անկարելի է: Արեւակայեցէք, թէ ի՞նչպէս պէտք է ուսուցիչը իւր սաներին բարոյական վերացականութիւնները բացատրէ, երբ նա երկիւղով լատուած բառից պէտք է խոյս տայ, երբ չի կարելի Ս. Գրքից օրինակներ բերել լուսարանութեան համար: Կարո՞ղ ենք երկխաներին մեղադրել, ինչպէս հազորդում է ֆրանսիական տեղեկատուն, երբ «այս դասերը վերին աստիճանի անտարբերութեամբ են լսում»: Բարոյականութիւնը անձատկուով կրօնից, զրկում ենք նորան իւր կենդանարար մասից: Ո՞վ այսչի իմանում՝ նա պատմութիւնից ոչինչ չէ սովորել, նա չէ ըմբռնում օրինակի թէ ի՛նչու ստոյլիեանները իրենց զարմանքի արժանի բարոյականու-

Թեոմի՝ Հիթանոսութեան բարոյական կործանման առաջն առնել չր կարողացան իսկ քրիստոնէութիւնը կարողացաւ Հիթանոս ժողովրդի և պետութեան աւերակների վերայ բարոյական մի նոր կարգ հաստատել: Այնտեղ պատկառում էր բարոյականութեան կրօնական շարժառիթը. ուստի և սոցիալիկան բարոյականութիւնը միայն մի քանի ընտրականների սեպհականութիւն մնաց, անզոր ընդհանրութիւնը դրաւելու: ուստի և անօգուտ ժողովրդական կեանքի համար և առանց ներգործութեան պատմութեան վերայ: Բայց քրիստոնէութեան առաւելութիւնն այն է, որ ամենաբարձր բարոյականութիւնը ի ներքուստ միացնում է կրօնական հաւատի հետ. ուստի և այս կրօնը անանց, բարոյական մի գործութիւն է, որին պատկանում է ապագան և պէտք է պատկանէ:

Այս կորստարեր ուղղութեան փայլուն ապացոյցներ են այսօր Ֆրանսիական հանրապետութեան մէջ այնքան յաճախ կրկնուող խայտառակութիւնները, որ մի ընդհանուր աւելումով պանամայականութիւն են կոչուում և որոնք ուղղակի հեռանք են շահերի բարոյականութեան: Այդ հեռանքն անխուսափելի է, քանի որ 100 գպրոցից 60-ի մէջ ոչ մի բարոյական սկզբունք չի աւանդուում իսկ 40-ի մէջ ևս փոխանակ բարոյականութեան անձնական հայեացքներ ու կուսակցական սկզբունքներ են ներշնչում:



Մ Ե Ն Ե Ը Լ Ո Ւ Բ Ե

ՀՐԵԱԿԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հրէական մամուլը. — Հրէական խնդրին ներդրում պարբերական Sion հրատարակութիւնը. որ լոյս է տեսնում Գերմանիայում: հետեւեալ հետաքրքրական վիճակագրութիւնն է տալիս երոսական մամուլի մասին: Երոսական մամուլն այսօր քաղկացած է 115 ամսագիրներից և թերթներից, որոնք հրատարակուում են գերմաներէն, ֆրանսերէն, տաճկերէն, ռուսերէն, լեհերէն, անգլիերէն, եբրայեցերէն, արաբերէն, սլաւոներէն և այժմեան հրէաբէն լեզուներով: Այս թերթներից 7 ամենօրեայ են, որոնցից 5 եբրայերէն են (Վարշաւում, Պետերբուրգում և Սոլոնիկում), 3 հայերէն, այսինքն գերմաներէնից աղծատուած և քաղմանքի պղտազի լեզուներից խճողում մի լեզուով: Հրէական թերթներից ամենից շատը (41) Միացեալ Նահանգումն են լոյս տեսնում: Աշխարհիս գրեթէ ամեն ծայրերում պարբերական հրատարակութիւններ ունեն հրեաները, այսպէս հարաւային Աֆրիկէում, Կապ գաղութում և Հնդկաստանում:

Բուլղարական մամուլը. — Նորածին Բուլղարիան հետ զհետ յառաջադիմում է, առ յառաջադիմութիւնը նշկատելի է և նրա պարբերական հրատարակութիւնների մէջ: 1894 թուին Բուլղարիայում կային միայն 29 պարբե-

րական հրատարակութիւններ, մինչ այսօր դրանց թիւն է 30: Միմիայն Սոֆիա փոքրիկ մայրաքաղաքում այս տարի մայիս ամսին հրատարակուում էին 21 թերթ: Սակայն զարմանալի է այն երեւոյթը, որ Բուլղարիայում ցարդ ամենօրեայ հրատարակութիւն չկար: Այսօր միայն մի հատ ամենօրեայ թերթ կայ Բուլղարիայում մէկում անգլոօրէն մորթած Նշանաւոր Սոֆիայի փողոցներից դա է. Սվոբոդան, այս օրերս թերթի փողոցներից մէկում անգլոօրէն մորթած Նշանաւոր Սոֆիայի Ստամբուլովի թերթը: Բուլղարական թերթներից շատերը լոյս են տեսնում շաբաթը 2 կամ 3 անգամ: Բացի բուլղարերէն թերթներից այնտեղ հրատարակում են և օտար լեզուներով լրագիրներ, այսպէս մէկը Ֆրանսերէն «La Bulgarie», մէկը գերմաներէն և 3 հատ յունարէն: Բուլղարական հանդէսների մէջ աշքի ընկնողն է Միսլ (Միտը) հանդէսը:

Ռուսական մամուլը. — Ռուսաց պարբերական հրատարակութիւններից ամենից տարածուածն է Նիւս, շաբաթաթերթը, որ 150,000 քաժանորդ ունի:

Պարբերական թերթների թանգանալը. — Մինչևեռ Եւրոպայում մամուլն հետ զհետ աճանաւորւում է և թերթների գնի պակասիւը յառաջադիմութեան նշան է համարուում, վերջերս Միացեալ Նահանգներում հակառակ երեւոյթ է նկատուում, այնտեղ Նշանաւոր թերթերն սկսել են իրենց գինը բարձրացնել. այն լրագիրները, որոնց առաջ հատով ծախուում էին 5 սանտիմով, այժմ ծախուում են 10 և 15 ու:

Հոգեւոր թղթախառն. — Պապական եկեղեցականներն իրանց հոգեւոր որդիք հաւատի ու բարեպաշտութիւն մէջ պահելու համար դիմում են շատ օտարտի և ինքնուրոյն միջոցների: Բարեպաշտ հոգիների օգտի ու զրուարթութեան, մեղաւորների փրկութեան և քաւարանում եղած հոգիների մեթաբարութեան համար՝ հարուած է մի առանձին. հոգեւոր թղթախառն:

Վիեննայում գտնուած հոմմէական կաթողիկոս Նորբերտի վաճառատունը հրատարակել է այնպիսի խաղաթղթների կապոցներ, որոնցով կարելի է մի հոգով էլ խաղալ քայց աւելի խրատական լինելու համար՝ լաւ է երկուսով խաղալ: Այդ կապոցից իբրեւ վիճակ հանուում է մի թուղթ, որի մէջ և ամփոփուած է փրկութեան աղբիւրը այլ և այլ բարեպաշտական կարծեաց ու խորհրդածութեանց ձևով: Խաղալու եղանակի մասին կրուած է հետեւեալ խրատը. «Հոգեւոր թղթախաղի մէջ, սկիզբի քրիստոնեայ, 52 թղթներից իւրաքանչիւրի վրայ կը գտնես մի կարծ խրատ այն գովական առաքինութեանց վերաբերմամբ, որոնք մօսին մեր աստուածային Փրկիւը իր շաբաթանցների միջոցին և մանաւանդ խաչի վրայից այնպէս թախանձագին ցարդում էր ամենքին. և որ ինքը լիովին կատարելով, հրամայեց նոյնը կատարել այն ամէն մարդուն, որ կը կամենար հետեւել նրան:

Ո՛վ քրիստոնեայ, եթէ դու նրբեւէ ազատ ժամանակ ունենաս, մտածի՛ր որ ազատ ժամանակ անցկացնելն էլ պէտք է նուիրիս հոգուդ փրկութեան համար. որովհետեւ մարդու երկրաւոր կեանքը ոչ թէ մի ունայն զուարթութիւն այլ մի բողոքիւն լուրջ խառն է: Նոյն իսկ ազատ ժամանակ անցկացնելու միջոցին էլ Թրիստոսի Ծմաբիտ աշակերտը չպէտք է անուշաղիք թողնի իր գլխաւոր նպատակը և խաղալիս պէտք է վարժուի առաքինութեանց մէջ: Կարծ կարա՞յ՞ Բ. Հոգու օգնութիւնը հայցելուց յետոյ, որ կարելի է անել Բարեպաշտ մտքով, խառնի՛ր այդ հոգեւոր խաղաթղթերը, և յանուն Աստուծոյ հանի՛ր կամ հանել տուր մէկին մի թուղթ, կարդա՛ այն ուշադրութեամբ և առանձին ուշ դարձրու այն խօսքերի և Աստուծոյ այն գաղտնեցի վրայ, որ տրուում են քեզ իբրեւ զՆՁ. առաքինօրէն ու